ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1:

Հեռ.՝ (374 10) 510910, 510920, 8686

Ֆաքս՝(374 10) 538904

E-mail: bank@aeb.am

Եռամսյակային հաշվետվություն թիվ 1 2015թ., 15 ապրիլի 2015թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)

արժեթղթերի քանակը՝ 933335

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ 2500 ՀՀ դրամ

«Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են»:

ստորագրող անձինք՝

(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ռուբեն Բադալյան	Գործադիր տնօրենի տեղակալ		15.04.2015թ.
Օնիկ Չիչյան	Գործադիր տնօրենի տեղակալի		15.04.2015թ
Դավիթ Ազատյան	Գլխավոր հաշվապահ		15.04.2015թ.
Հայկ Ավետիսյան	Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ		15.04.2015թ.
Արտակ Առաքելյան	Տարածքային կառավարման վարչության պետ		15.04.2015թ.
Վրեժ Ջհանգիրյան	Իրավաբանական վարչության պետ		15.04.2015թ.
Արթուր Առաքելյան	Վարկավորման վարչության պետ		15.04.2015թ.
Արմեն Նալչյան	Գործադիր տնօրեն		15.04.2015թ.

Կ.Տ.

Միջանկյալ Համախմբված Հաշվետվություն
Ֆինանսական վիճակի մասին
«31» ՄԱՐՏԻ 2015թ.
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ք.Երևան, Ամիրյան փող.23 /1

Հազ. դրամ

	Անվանում	Ծանոթագրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (չստուգված)	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (չստուգված)
1	**Ակտիվներ**			
1.1	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	20,237,380	20,600,018
1.2	Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամներ		1,413	8,825
1.3	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	7,083,043	8,157,813
1.4	Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ	15		54,263
1.5	Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	16	48,832,128	52,094,693
1.6	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17	1,273,311	49,478
1.6.1	Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	17.1	5,092,465	6,118,812
1.8	Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում	19	236,396	227,439
1.9	Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ			
1.10	Հիմնական միջոցներ	20	4,028,765	4,041,033
1.10.1	Ոչ նյութական ակտիվներ	20	93,783	95,021
1.11	Հետաձգված հարկային ակտիվներ	11	72,785	33,190
1.12	Այլ ակտիվներ	21	449,458	505,456
	Ընդամենը՝ ակտիվներ		**87,400,927**	**91,986,041**
2	**Պարտավորություններ**			
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	26,013,756	22,310,663
2.2	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	48,446,208	57,528,932
2.3	Ստորադաս փոխառություն	23.1	1,205,523	
2.4	Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		64,519	116,061
2.6	Առևտրային նպատակներով պահվող պարտավորություն	25	23,067	19,659
2.7	Վճարվելիք գումարներ	26	52,775	52,781
2.9	Այլ պարտավորություններ	27	648,693	817,306
	Ընդամենը՝ պարտավորություններ		**76,454,541**	**80,845,402**
3	**Կապիտալ**			
3.1	Կանոնադրական կապիտալ	28	2,333,338	2,333,338
3.3	Պահուստներ՝			
3.3.1	Գլխավոր պահուստ		5,405,133	5,405,133
3.3.2	Վերագնահատման պահուստներ		125,479	262,661
3.4	Չբաշխված շահույթ (վնաս)		3,082,436	3,139,507
	Ընդամենը՝ կապիտալ		**10,946,386**	**11,140,639**
	Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		**87,400,927**	**91,986,041**

Վարչության նախագահ (Գործադիր տնօրեն) Ա.Նալչյան

Գլխավոր հաշվապահ Դ.Ազատյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 2015թ.ապրիլի 14-ին

Միջանկյալ Համախմբված Հաշվետվություն
Ֆինանսական արդյունքների մասին
«31» Մարտ 2015թ.
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Ք.Երևան, Ամիրյան 23/1.

Հազ.դրամ

Անվանում	Ծանոթագրություն	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	2,242,943	1,905,342
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(1,319,647)	(967,625)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		**923,296**	**937,717**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	309,953	306,527
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(72,427)	(78,068)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		**237,526**	**228,459**
Եկամուտ շահաբաժիններից			
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	149,197	204,434
Այլ գործառնական եկամուտներ	6	56,498	102,091
Գործառնական եկամուտներ		**1,366,517**	**1,472,701**
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	7	(44,539)	(85,480)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(1,106,361)	(1,063,945)
Այլ գործառնական ծախսեր	9	(286,793)	(264,540)
Գործառնական շահույթ		**(71,176)**	**58,736**
Ասոցիացված ընկերության գործունեությունից շահույթ (վնաս)	10	9,694	(7,711)
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը		**(61,482)**	**51,025**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	11	4,411	6,932
ժամանակաշրջանի շահույթ		**(57,071)**	**57,957**

Վարչության նախագահ (Գործադիր տնօրեն) Ա. Նալչյան

Գլխավոր հաշվապահ Դ. Ազատյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 2015թ. Ապրիլի 14-ին

Միջանկյալ Համախմբված հաշվետվություն
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին
«31» Մարտ 2015թ.
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Ք.Երևան, Ամիրյան 23/1.

Հազ.դրամ

Անվանում	Ծանոթագրություն	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ		(170,557)	(224,401)
Այլ համապարփակ եկամտի գծով շահութահարկ		34,111	44,880
Ասոցիացված ընկերության վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումներ		(737)	(92)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		(137,182)	(179,613)
Համապարփակ ֆինանսական արդյունք		(194,253)	(121,656)

Վարչության նախագահ (Գործադիր տնօրեն) Ա. Նալչյան

Գլխավոր հաշվապահ Դ. Ազատյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 2015թ. Ապրիլի 14-ին

Միջանկյալ Համախմբված Հաշվետվություն
Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ
«31» Մարտի 2015թ.
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ք.Երևան, Ամիրյան փող.23 /1

Հազ.դրամ

Անվանում	Ծանոթագրություն	Հաշվետու ժամանակաշրջան (չստուգված)	Նախորդ ժամանակաշրջան (չստուգված)
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		274,974	508,895
Ստացված տոկոսներ		2,200,487	1,979,630
Վճարված տոկոսներ		(1,182,174)	(904,958)
Ստացված կոմիսիոն գումարներ		359,890	398,823
Վճարված կոմիսիոն գումարներ		(75,393)	(81,038)
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս)		-	43,146
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս)		183,324	181,084
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ		21,504	3,627
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		(795,793)	(768,669)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր		(436,872)	(342,750)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից			
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)		3,641,566	(2,118,211)
Պահանջ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		1,031,333	(1,584,459)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ		2,979,529	(254,643)
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր		(440,938)	(286,818)
Այլ գործառնական ակտիվներ		71,642	7,710
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)		(6,686,973)	3,929,903
Պարտավորություն ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		2,147,018	2,618,680
Պարտավորություն հաճախորդների նկատմամբ		(8,579,251)	1,615,627
Այլ գործառնական պարտավորությունների նվազում		(254,741)	(304,403)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		(2,770,434)	2,320,588
Վճարված շահութահարկ		(52,374)	(52,992)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		(2,822,808)	2,267,596
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներ			
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումներ		(55,666)	(79,767)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(25,207)	(254,672)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում			3,268
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		(80,873)	(331,171)
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Վճարված շահաբաժիններ		(331)	(216)
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		(19,711)	(20,509)
Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		2,216,808	(10,830)
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)		651,636	(185,908)
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		2,848,402	(217,463)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(397,596)	103,497
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		(55,279)	1,718,962
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի	13 2	22,354,455	17,866,741
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի	13 2	21,901,580	19,689,200

Վարչության նախագահ (Գործադիր տնօրեն) Ա.Նալչյան

Գլխավոր հաշվապահ Դ.Ազատյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 2015թ. Ապրիլի 14-ին

Միջանկյալ Համախմբված Հաշվետվություն
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին
«31» Մարտի 2015թ.
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ք.Երևան, Ամիրյան փող.23 /1

Հազ. դրամ

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ			Գլխավոր պահուստ	Հաշտեցման մնացեալի վերադասավորումներ ֆինանսական գործիքների վերադասավորումներ	Չբաշխված շահույթ/վնաս	Ընդամենը	Ընդամենը սեփական
	Կանոնադրական կապիտալի	Հետգնված կապիտալի	Ընդամենը					
Հոդվածներ	1	2	3	5	7	10	12	14
Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I աղյուսակ)								
Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2014թ. (ստուգված)	2,333,338	-	2,333,338	5,405,133	1,071,594	2,253,484	11,063,549	11,063,549
Համապարփակ եկամուտ	-	-	-	-	(179,613)	57,957	(121,656)	(121,656)
Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում 31.03.2014թ. (չստուգված)	2,333,338	-	2,333,338	5,405,133	891,981	2,311,441	10,941,893	10,941,893
Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)								
Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2015թ. (չստուգված)	2,333,338	-	2,333,338	5,405,133	262,661	3,139,507	11,140,639	11,140,639
Համապարփակ եկամուտ	-	-	-	-	(137,182)	(57,071)	(194,253)	(194,253)
Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում 31.03.2015թ. (չստուգված)	2,333,338	-	2,333,338	5,405,133	125,479	3,082,436	10,946,386	10,946,386

Վարչության նախագահ (Գործադիր տնօրեն) Ա.Նալչյան

Գլխավոր հաշվապահ Դ.Ազատյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 2015թ. ապրիլի 14-ին

Գնահատելով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաշվետու եռամսյակի գործունեությունը՝ պետք է նշենք, որ հաշվետու եռամսյակում բանկը ապահովել է կարևոր որակական տեղաշարժեր:

Կարևորվում է բանկի՝ որպես ունիվերսալ կառույցի զարգացման ռազմավարության շարունակականությունը, որը կպահպանվի նաև ապագայում:

Հաշվետու եռամսյակը արդյունավետ էր նաև միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ համագործակցության առումով. ընդլայնվեցին գործող ծրագրերը և ծավալվեց գործակցություն նոր բանկային ծառայությունների ոլորտում:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաստատուն քայլերով շարունակելու է իր առաջընթացը նոր վարկային ծրագրերի ներդրման ու զարգացման և միջոցների ներգրավման նոր շուկաների յուրացման ոլորտներում:

Հանդիսանալով ունիվերսալ բանկ՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գործունեություն է ծավալում բանկային ծառայությունների մատուցման բոլոր ոլորտներում: Բանկը իր կայուն դիրքերն ունի թե արտարժութային, թե արժեթղթերի, թե միջբանկային շուկաներում: Որպես ունիվերսալ կառույց, բանկը ակտիվ գործունեություն է ծավալում թե վարկավորման, թե ծառայությունների մատուցման, թե փոխանցումների նոր ձևերի, թե պլաստիկ քարտերի սպասարկման ոլորտներում:

Բանկի առջև դրված հեռանկարային և կարճաժամկետ (ընթացիկ) նպատակների իրականացմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը պայմանավորված է ռիսկերի կառավարման օպտիմալ համակարգի առկայությամբ, որն ուղղված է ռիսկերի ընդունելի մակարդակի և ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցության պայմաններում Բանկի գործունեության շարունակականության ապահովմանը:

Բանկում ռիսկերի կառավարման մշակույթը ենթարկվում է շարունակական կատարելագործման՝ ելնելով կայուն, հուսալի, արդյունավետ և ապահով գործունեության ծավալման նպատակներից:

Բանկը ռիսկերի կառավարման համակարգի զարգացման և շարունակական կատարելագործման աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվում է միջազգային պրակտիկայում ընդունված չափորոշիչներով, այդ թվում՝ Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի համաձայնագրերի, ISO/IEC 27001 (Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ) միջազգային ստանդարտի և այլ պահանջներով, որի արդյունքում Բանկում ձևավորվել է ռիսկերի կառավարման արդյունավետ և օպտիմալ համակարգ:

Ռիսկերի կառավարումը էական նշանակություն ունի և՛ առանձին բանկերի, և՛ բանկային համակարգի կայուն, հուսալի, արդյունավետ և ապահով զարգացման գործընթացում, ուստի գնալով ավելի է կարևորվում արդյունավետ ռիսկերի կառավարման համակարգի ներդրումը առանձին բանկերում և բանկային համակարգում: Կառավարման իրավասու մարմինների կողմից սահմանվում են առաջադրված ընթացիկ և ռազմավարական նպատակների իրականացման տեսանկյունից նպատակահարմար՝ ռիսկերի ընդունելի մակարդակները, որոնք Բանկի ղեկավարության կարծիքով կապահովեն Բանկի կայուն զարգացումը:

Ռիսկերի կառավարման գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից՝ Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերի նույնականացում, գնահատում, հսկողություն, հաղորդակցում-հաշվետվություն և գնահատված ռիսկերին արձագանքում:

Ընդ որում ռիսկերին արձագանքման փուլն իրականացվում է ռիսկից խուսափման, ռիսկի նվազեցման, ռիսկի ընդունման կամ ռիսկի փոխանցման տարբերակներով: Ռիսկերի կառավարման գործընթացում ներգրավված են Բանկի կառավարման մարմինները, ղեկավարները և բոլոր ստորաբաժանումների աշխատակիցները՝ ռազմավարական խնդիրների սահմանման, բանկային գործունեությունը կանոնակարգող ընթացակարգերի, այլ ներքին իրավական ակտերի, ծրագրերի մշակման ընթացքում ռիսկերի բացահայտման, ինչպես նաև բանկային գործառնությունների կատարման ընթացքում դրանց հսկողության իրականացման միջոցով:

Ակտիվների և պասիվների կառավարման գործընթացի հիմքում ընկած են մշակված և շարունակաբար կատարելագործվող մաթեմատիկական մոդելների միջոցով իրականացվող վերլուծությունները՝ ուղղված կառավարման արդյունավետության բարձրացմանը և ռիսկերի զսպման մեխանիզմների կիրառմանը: Վարվող ճկուն տոկոսադրույքային քաղաքականությունը հնարավորություն է ընձեռում բարձրացնել անհրաժեշտ ռեսուրսային բազայի ապահովման գործընթացի արդյունավետությունը և նվազեցնել ռիսկայնությունը՝ հաշվի առնելով ներգրավվող միջոցների դիվերսիֆիկացիան:

Տնտեսամաթեմատիկական մոդելավորման գործիքների կիրառման, գործընթացների կանոնակարգման, վերլուծության, կանխատեսման և ներքին հսկողության համակարգի մշտական կատարելագործման արդյունքում՝ Բանկը հնարավորություն է ստանում ռիսկերի կառավարման համակարգի միջոցով ապահովել ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցությունը՝ Բանկի զարգացման կշռադատված ռազմավարության պայմաններում բացառելով կամ նվազագույնի հասցնելով Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստները և ապահովելով գործող նորմատիվային դաշտի պահանջները:

Ռիսկերի կառավարման հիմնական սկզբունքները, առանձին ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոտեցումները, մեթոդաբանությունները և մոդելները սահմանված են բանկի ներքին իրավական ակտերում՝ զուգակցելով դրանք բանկի համախառն ռիսկի գնահատման և դրա օպտիմալ կառավարման միջոցառումների սահմանմամբ: Բանկի ռիսկերի կառավարման համակարգը ներքին և արտաքին միջավայրերում տեղի ունեցող փոփոխություններին, բանկի ռազմավարական խնդիրներին և իրականացվող գործառնությունների ծավալային և որակական բնութագրերին համապատասխանեցնելու նպատակով ռիսկերի կառավարման ոլորտը կանոնակարգող ներքին իրավական ակտերը պարբերաբար վերանայվում են:

Բանկի համախառն ռիսկը կառավարվում է համապատասխան տնտեսամաթեմատիկական մոդելի հիման վրա՝ արտարժութային, վարկային, իրացվելիության և տոկոսադրույքի փոփոխման ռիսկերի և դրանց գումարային՝ համախառն ռիսկի էական չափերի (մակարդակների) սահմանման և մոնիտորինգի միջոցով: Ռիսկերի էական մակարդակները կարող են վերանայվել՝ ելնելով Բանկի ռազմավարական նպատակներից, շուկայում առկա միտումներից և մրցակցության մակարդակից, ինչպես նաև միջավայրի այլ փոփոխություններից:

Համաձայն ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ռիսկերի կառավարման քաղաքականության» պահանջների, հաշվի առնելով Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի և GARP-ի (Generally Accepted Risk Principles) ռիսկերի կառավարման սկզբունքները՝ բանկում մշակվել և ներդրվել են հետևյալ հիմնական ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոդելները.

- վարկային ռիսկ,

- տոկոսադրույքների փոփոխման ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- արտարժութային ռիսկ,
- գնային ռիսկ,
- գործառնական ռիսկ:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը վարկի, հաշվարկված տոկոսի կամ դրանց մի մասի պայմանագրով սահմանված ժամկետներից ուշացման կամ անվերադարձելիության հնարավոր վտանգն է՝ պայմանավորված վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացմամբ, գրավի արժեզրկմամբ և նման այլ պատճառներով:

Բանկում ներդրված մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս գնահատել և օպտիմալ կառավարել վարկային ռիսկը որպես էկզոգեն փոփոխականներ ներառելով նաև էքսպերտային գնահատականները և նպաստելով վարկի տրամադրման հիմնավորված որոշումների կայացմանը: Բանկի վարկային պորտֆելի կառուցվածքի հնարավոր տարբեր փոփոխությունների ազդեցությունները Բանկի գործունեության ընթացիկ ցուցանիշների վրա վերլուծվում և գնահատվում է սթրես թեստավորման և տարբեր հավանական սցենարների դիտարկման միջոցով: Մշակված սթրես թեստերի տարբեր սցենարների միջոցով իրականացվում է վարկային ռիսկի գնահատում՝ հաշվարկելով որոշակի շոկային իրավիճակների ազդեցությունը բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափի և համարժեքության նորմատիվների վրա, գնահատվում են նորմատիվների խախտման հնարավորությունը և չափերը, պահուստաֆոնդ փոխանցման ենթակա հավելյալ գումարի չափը: Վարկային պորտֆելի ռիսկայնությունը գնահատվում է տարբեր հնարավոր սցենարների վերլուծության և առավել հավանական սցենարների դիտարկման միջոցով, որի արդյունքների հիման վրա ձեռնարկվում են ռիսկայնության նվազագույն մակարդակի ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումներ: Սցենարային վերլուծություններում դիտարկվում են ինչպես ներքին գործոններ (հիմնական կապիտալից նվազեցումներ, ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքային փոփոխություններ և այլն), այնպես էլ արտաքին գործոններ (սղաճ, միջոցների արտահոսք և այլն): Վերոնշյալ սթրեսային սցենարների վերլուծության շրջանակներում իրականացվում է նաև նորմատիվների խախտման կրիտիկական կետերի հաշվարկ և վերլուծություն, որը տեղեկատվություն է տալիս տվյալ օրվա դրությամբ նորմատիվների խախտման հավանականության՝ որպես վարկային ռիսկի յուրօրինակ գնահատականի վերաբերյալ:

Դասակարգված արտարժութային վարկերի մնացորդների նշանակալի շեմի սահմանման, ինչպես նաև վարկային պորտֆելում դասակարգված արտարժութային և դրամային վարկերի մնացորդների և քանակների հարաբերակցությունների սահմանափակման միջոցով իրականացվում է արտարժութային ռիսկով պայմանավորված վարկային ռիսկի նկատմամբ հսկողություն և անհրաժեշտության դեպքում ձեռնարկվում են վերջինիս զսպմանն ուղղված միջոցառումներ:

Վարկային ռիսկի կառավարման արդյունավետ համակարգի շնորհիվ բանկի վարկային պորտֆելը շարունակում է պահպանել ավանդական բարձր որակը և ցածր ռիսկայնության աստիճանը:

Տոկոսադրույքների փոփոխման ռիսկ

Տոկոսադրույքի փոփոխման (տոկոսադրույքի) ռիսկը բանկի զուտ տոկոսային եկամտի կամ կապիտալի տնտեսական արժեքի վրա շուկայական տոկոսադրույքների փոփոխման բացասական ազդեցության հավանականությունն է:

Միջազգային պրակտիկայում լայն տարածում գտած «GAP մոդելի» միջոցով տոկոսադրույքների փոփոխության ռիսկը գնահատվում է տոկոսադրույքների փոփոխման նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների դիսբալանսի և ժամկետայնության ճեղքվածքների վերլուծության հիման վրա: «Դյուրացիայի մոդելի» հիման վրա տոկոսադրույքի փոփոխման ռիսկը գնահատվում է ակտիվների և պարտավորությունների միջին կշռված ժամկետայնության ցուցանիշների կիրառմամբ՝ դիտարկելով դյուրացիան որպես տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ ակտիվների և պարտավորությունների ներկա արժեքների զգայունության գնահատման գործիք:

Իրականացվում է նաև առանձին արժույթներով արտահայտված ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքների վերլուծություն՝ զուտ տոկոսային եկամտի վրա դրանց տոկոսադրույքների փոփոխության ազդեցության տեսանկյունից:

Նշված մոդելները հնարավորություն են տալիս ակտիվների և պարտավորությունների դյուրացիաների վերլուծության միջոցով իրականացնել ակտիվների և պարտավորությունների օպտիմալ կառավարում՝ հեջավորելով տոկոսադրույքի ռիսկը:

Եռամսյակային և տարեկան կտրվածքով իրականացվում է տոկոսադրույքների փոփոխության՝ Բանկի զուտ տոկոսային եկամտի և կապիտալի վրա ազդեցության սցենարային վերլուծություն, ինչպես նաև սթրես թեստավորում, որոնց արդյունքները ներառվում են Բանկի հրապարակվող միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում և այլ հաշվետվություններում:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը հավանականությունն է, որ բանկն ի վիճակի չի լինի ճիշտ ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջներն՝ առանց լրացուցիչ կորուստներ կրելու:

Բանկում իրացվելիության ռիսկի կառավարումն իրականացվում է ակտիվա-պասիվային գործառնությունների՝ ըստ ժամկետների և ծավալների տեղաբաշխվածության կարգավորման և օրական դրամական հոսքերի համապատասխանեցման միջոցով՝ պահպանելով իրացվելիության և շահութաբերության օպտիմալ հարաբերակցությունը: Ժամկետայնության ճեղքվածքների հիմնադրույթի կիրառման հիման վրա Բանկում ներդրված իրացվելիության ցուցանիշների գնահատման և կառավարման մեթոդաբանությունը հնարավորություն է ընձեռում հաշվարկված ակնթարթային, մինչև 90 օր և մինչև 1 տարի կուտակային իրացվելիության ցուցանիշների ժամանակային շարքերի հիման վրա գնահատել ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքների ազդեցությունը Բանկի իրացվելիության վրա, որը հիմք է հանդիսանում ակտիվների և պարտավորությունների կառավարման օպտիմալ որոշումների կայացման համար:

Սթրես թեստավորման սցենարային մոդելը հնարավորություն է տալիս գնահատել իրացվելիության նորմատիվների վրա շոկային տարբեր հնարավոր իրավիճակների ազդեցությունը՝ վերլուծելով ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների որոշակի բաժնեմասի պայմանագրի ժամկետից շուտ ետ պահանջման և ցպահանջ պարտավորությունների որոշակի բաժնեմասի ետ պահանջման դեպքում (ինչպես նաև նշված բաժնեմասերի տարբեր հնարավոր համակցությունների դեպքում) նորմատիվների փոփոխությունները և դրանց խախտման հավանականությունը: Նորմատիվների խախտման կրիտիկական կետերի հաշվարկումը հնարավորություն է տալիս ստանալ բանկի իրացվելիության ռիսկի այլընտրանքային գնահատականներ՝ վերլուծելով ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների պայմանագրի ժամկետից շուտ ետ պահանջման և ցպահանջ պարտավորությունների ետ պահանջման ազդեցությունը նորմատիվների վրա և վերջիններիս խախտման հավանականությունները:

Բանկի կողմից ներգրավված ցպահանջ և ժամկետային միջոցների կենտրոնացումների ռիսկի գնահատման տնտեսամաթեմատիկական մոդելը, քվանտիլային վերլուծության հիման վրա, հնարավորություն է տալիս գնահատել ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների կենտրոնացումների մակարդակները: Մշակված մեթոդաբանության շրջանակներում իրականացվում է նաև սթրես թեստերի սցենարային վելուծություն, որը ներառում է խոշորագույն 10% հաճախորդ ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների արտահոսքի ազդեցությունները նորմատիվների վրա, ինչպես նաև հաճախորդների վերոհիշյալ չորս խմբերից (ժամկետային ավանդ ներդրած ֆիզիկական և իրավաբանական անձինք, ցպահանջ ավանդ ներդրած ֆիզիկական և իրավաբանական անձինք) յուրաքանչյուրի 1%-ի ավանդների արտահոսքի գումարային ազդեցությունը տնտեսական նորմատիվների վրա: Իրացվելիության կառավարման շրջանակներում դիտարկվում են նաև որոշակի շեմային ծավալից ավելի միջոցներ ներդրած խոշոր իրավաբանական և ֆիզիկական անձ առանձին հաճախորդների, ինչպես նաև դրանց խմբերի միջոցների արտահոսքի սցենարային վերլուծությունները, որի արդյունքում ևս գնահատվում է միջոցների արտահոսքի ազդեցությունը նորմատիվների ընթացիկ մակարդակների վրա:

<u>Արտարժութային ռիսկ</u>

Արտարժութային ռիսկը արտարժույթի փոխարժեքների տատանման արդյունքում Բանկի կորուստներ կրելու հավանականությունն է:

Բանկում արտարժութային ռիսկի կառավարումն իրականացվում է կիրառելով միջազգային պրակտիկայում ընդունված VAR մեթոդաբանությունը, ինչպես նաև սթրես թեստերի սցենարային վերլուծության մեթոդները: Սթրես թեստերի սցենարային վերլուծություններում դիտարկվում է արտարժույթի փոխարժեքի կտրուկ տատանման ազդեցությունը նորմատիվների վրա: Դիտարկվում են՝ ՀՀ դրամի արժեվորման և արժեզրկման սթրեսային սցենարներ, ինչպես նաև ըստ առանձին արտարժույթների փոխարժեքների տատանման սցենարային համակցության տարբերակ, որի դեպքում հնարավոր վնասը կկազմի առավելագույնը:

Արտարժութային ռիսկի կառավարման նպատակով կիրառվող VAR մեթոդաբանության հիմքի վրա մշակված արտարժույթների փոխարժեքների

տատանումներից հնարավոր առավելագույն վնասների գնահատման տնտեսամաթեմատիկական մոդելը հնարավորություն է տալիս գնահատել Բանկի բաց դիրքերով պայմանավորված հնարավոր կորուստների ռիսկը: Մոդելի համար մուտքային տվյալներ են հանդիսանում փոխարժեքների վերջին 1 տարվա ժամանակային շարքի վարիացիայի ցուցանիշները և Բանկի արտարժութային ակտիվների և պարտավորությունների ծավալները: Մոդելը հնարավորություն է տալիս գնահատել առանձին արտարժույթների գծով և ընդհանուր արտարժութային ակտիվների և պարտավորությունների փաթեթի գծով առկա ռիսկի (հնարավոր առավելագույն վնասի) չափը որոշակի հուսալիության մակարդակով, որը հիմք է հանդիսանում արտարժույթով ակտիվների և պարտավորությունների կառավարման օպտիմալ որոշումների կայացման համար:

Արտարժույթի փոխարժեքների փոփոխության ազդեցությունը Բանկի շահույթի վրա գնահատվում է նաև եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ սթրես թեստերի սցենարային վերլուծության միջոցով, որի արդյունքները ներառվում են Բանկի հրապարակվող միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

<u>Գնային ռիսկ</u>

Գնային ռիսկը որևէ բորսայում(ներում) ցուցակված, բանկի հաշվեկշռում շուկայական ընթացիկ գներով արտացոլվող կապիտալի գործիքների շուկայական գների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով Բանկի կողմից ֆինանսական կորուստներ կրելու վտանգն է՝ պայմանավորված ինչպես տվյալ կապիտալի գործիքի և դրա թողարկողի, այնպես էլ շուկայում շրջանառվող կապիտալի գործիքների շուկայական գների ընդհանուր տատանումների հետ կապված գործոններով (տվյալ կապիտալի գործիքի գծով երկար կամ կարճ դիրքի առկայության պայմաններում):

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում.

- ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում,
- հնարավոր կորուստների գնահատում,
- հեջավորման գործիքների կիրառում,
- ֆինանսական գործիքների գծով լիմիտների (ըստ կապիտալի գործիքներով գործառնության տեսակի, ըստ դիլերի, ըստ թողարկողի, stop-loss) սահմանում,
- կապիտալի գործիքների փաթեթի բազմազանեցում (դիվերսիֆիկացիա)՝ ըստ թողարկողի, տնտեսության ճյուղերի, ժամկետայնության և այլն:

<u>Գործառնական ռիսկ</u>

Բանկային հիմնական և օժանդակ բիզնես-գործընթացների յուրաքանչյուր բաղադրիչ գործառնությունը պարունակում է որոշակի մակարդակի գործառնական ռիսկ, որը կարող է հանգեցնել ինչպես փոքր, այնպես էլ Բանկի համար էական չափերի հասնող կորուստների, որով էլ պայմանավորված է գործառնական ռիսկի արդյունավետ

կառավարման կարևորությունը և առաջնային նշանակությունը բանկերի համար: Բանկի ռիսկերի կառավարման ոլորտը կանոնակարգող ներքին իրավական ակտերով գործառնական ռիսկը սահմանվում է որպես ուղղակի կամ անուղղակի կորուստների վտանգ (հնարավորություն)՝ առաջացած կամ պայմանավորված Բանկի անձնակազմի ոչ համարժեք կամ սխալ գործողություններով, բանկային գործընթացների կազմակերպման և կատարման թերություններով, խափանումներով, ինչպես նաև անբարենպաստ արտաքին միջավայրի գործողություններով և իրավիճակներով:

Գործառնական ռիսկի վերահսկողության արդյունավետ համակարգի կիրառումն այդ ռիսկի օպտիմալ կառավարման կարևորագույն գործոններից է, որն ապահովվում է օրական հսկողության իրականացման, պարբերական և թեմատիկ ստուգումների միջոցով գործող կանոնակարգվածության մակարդակի պատշաճության գնահատման, կանոնակարգման կարիք ունեցող գործառույթների վերհանման, հնարավոր ռիսկերի բացահայտման և պատասխանատու մարմիններին դրանց մասին տեղեկացման միջոցով:

Բազել II համաձայնագրի պահանջներին համապատասխան՝ գործառնական ռիսկի գծով կորուստների վերաբերյալ տվյալների բազայի (կորուստների դեպքերի, դրանց չափերի, պատճառների և այլ ռեկվիզիտների վերաբերյալ) հիման վրա իրականացվում է կորուստների պատճառների և չափերի ամփոփ վերլուծություն՝ հետագայում դրանց հնարավորինս բացառման կամ ի հայտ գալու հավանականության նվազագույն մակարդակի ապահովմանն ուղղված միջոցառումների ձեռնարկման նպատակով:

Հաշվի առնելով բանկի կայուն զարգացման ռազմավարության շարունակականությունը, ապագա ծրագրավորվող գործունեությունը նպատակաուղղված է լինելու բանկի դիրքի ամրապնդմանը և ընդլայնմանը ՀՀ բանկային շուկայում, միջազգային շուկաներ դուրս գալու հնարավորության ուսումնասիրմանը, որը հիմնականում նախատեսում է ակտիվների հետագա կայուն աճ /կանխատեսվում է նվազագույնը 10-15%-ի տարեկան աճ/, ինչպես ներգրավված ռեսուրսների /ավանդներ, միջազգային վարկային ծրագրեր/, այնպես էլ ձևավորած շահույթի և սեփական կապիտալի հաշվին:

Բանկի առաջիկա տարիների զարգացումը մեծապես պայմանավորված կլինի նոր ինստիտուցիոնալ բաժնետիրոջ հետ ծավալվող որակական նոր մակարդակի համագործակցությամբ: Կշարունակվի EBRD հետ վարկային ծրագրին զուգահեռ ակտիվորեն իրականացվող արտաքին առևտրի ակրեդիտիվային ֆինանսավորման ծրագիրը, ինչպես նաև հիփոթեքային ծրագիրը:

Բանկը նախատեսում է ընդլայնել իր համագործակցությունը նաև միջազգային ֆինանսական այլ կազմակերպությունների, հատկապես KfW, IFC, Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկի, Համաշխարհային Բանկի, Ասիական Զարգացման բանկի և FMO-ի հետ՝ փոքր և միջին բիզնեսի վարկավորման հետ զուգահեռ առավել արագ կզարգանա հիփոթեքային վարկավորման համատեղ ծրագրերի իրականացումը, ինչպես նաև նոր ոլորտների վարկավորման ծրագրերը:

Առաջիկա ծրագրավորվող եկամուտների աճի հիմնական մասը նախատեսվում է ստանալ տոկոսային եկամուտներց, ավելացնելով մատուցվող ծառայություններից ձևավորվող եկամուտները: Վարկերից տոկոսային եկամուտների ավելացման ուղղությամբ կատարվում է նոր վարկային տեխնոլոգիաների ուսումնասիրում և ներդրում:

Մատուցվող ծառայություններից եկամուտների ավելացման համար իրականացվում է դրանց բազմազանում, պլաստիկ քարտերով ծառայությունների ցանկի ընդլայնում,

կատարվում է անհատական պահատեղերի տրամադրում, նախատեսվում է ավելացնել բանկոմատների և սպասարկման կետերի ցանկը, զգալի արդյունքներ են ծրագրավորվում Europay և Visa վճարային համակարգի անդամությունից և միջազգային պլաստիկ քարտերի սպասարկումից, կոմունալ ծախսերի ընդունման ընդլայնումից:

Նշված խնդիրների իրականացման համար բանկը շարունակելու է տեխնիկայի պարբերական վերազինումը, ընթացակարգերի կատարելագործումը, նոր բանկային տեխնոլոգիաների ներդրումը:

Բանկը, հանդիսանալով ՀՀ բանկային համակարգի կայուն օղակներից մեկը, որպեսզի առավելագույնս օգտագործի տնտեսության առկա հնարավորությունները, ապահովելով բարձր մրցունակություն ֆինանսաբանկային շուկայում, շարունակելու է մատուցել ունիվերսալ բանկային ծառայություններ:

Արդյունավետ զարգացման կարևորագույն նախապայմաններից համարելով առաջատար փորձի և նոր բանկային տեխնոլոգիաների ներդրումը, բանկում ընդլայնվելու է գործարկված հաճախորդների սպասարկման այնպիսի ծառայություն, ինչպիսին, օրինակ, HomeBank համակարգն է, որը հնարավորություն է տալիս հաճախորդին բանկային ծառայությունները ստանալ առանց բանկ այցելելու: Ուսումնասիրվում և ներդվելու են ինտերնետային տեխնոլոգիաներ, հաշվի առնելով ռիսկայնությունը և ներդրման առկա հնարավորությունները:

Ընդլայնվելու են վճարահաշվարկային նոր ծառայությունների մատուցումը, պլաստիկ /ինչպես տեղական, այնպես էլ միջազգային/ քարտերով սպասարկումը, կոմունալ վճարումների ընդումնումը և այլն: Բանկը նախատեսում է նաև թողարկել նոր կուտակային վճարային պլաստիկ քարտեր (տոկոսադրույքի կապիտալացման հնարավորությամբ), ներդնել վարկային քարտի պրոդուկտը (վարկային գծի առկայությամբ), որի միջոցով քարտատերերը կկարողանան կատարել անկանխիկ գործարքներ առևտրի կենտրոններում և որպես Բանկի քարտատեր ստանալ անհատական զեղչեր այդ առևտրի կենտրոններում, որոշակի սպասարկման ոլորտների հետ թողարկել համատեղ քարտեր, որի միջոցով քարտատերերը տվյալ սպասարկման կետերից որոշակի արտոնություններից օգտվելու հնարավորություն կստանան, ընդլայնել ֆակտորինգային գործառնությունները:

Տարածքային քաղաքականության շրջանակներում կշարունակվի մասնաճյուղային ցանցի ընդլայնումը, նպատակ ունենալով ապահովել բանկի ներկայությունը հանրապետության ողջ տարածքով, ինչպես նաև գործող մասնաճյուցերի վերակառուցումն ու վերանորոգումը:

Հիմնական բացասական գործոնները, որոնք կարող են որոշակի ազդեցություն թողնել բանկի գործունեության վրա՝ քաղաքական–տնտեսական գործընթացներն են՝ երկրի տնտեսության հետագա զարգացման միտումները, պետության վարած դրամավարկային քաղաքականության հնարավոր տատանումները, հարկային քաղաքականության փոփոխությունը, որը կազդի գործարար ակտիվության վրա, ինչպես նաև օրենսդրական դաշտը՝ կապված բանկային գործունեության կարգավորման հետ:

Նշված ռիսկերը մեղմելու համար բանկը շարունակելու է վարել հավասարակշռված ներգրավումային և ներդրումային քաղաքականություն, հնարավորինս կանխատեսելով զարգացման միտումները, դիվերսիֆիկացնելով ռիսկը, ընդլայնելով ծառայությունների ցանկը, խուսափելով վարկային և ավանդային պորտֆելների կենտրոնացումներից:

Բանկի համապատասխան մասնագիտական ստորաբաժանումը մեծ ուշադրություն է դարձնում բանկային նոր ծրագրերի ներդրման, գործող ծրագրերի կատարելագործման

խնդիրներին: Բանկում նոր տեխնոլոգիաների ներդրումը և զարգացումը կրում է ծրագրավորված բնույթ: Ըստ առանձին բանկային ծառայությունների ոլորտների, ուսումնասիրվում է առաջատար համաշխարհային փորձը, կատարվում է մարքեթինգային ուսումնասիրություն դրա նկատմամբ, ապահովվում է ծառայությունների և տեխնոլոգիաների ներդրման հստակ ընթացակարգերի մշակումը՝ իրականացնելով նաև ներդրման փորձաքննություն:

Բանկում մշտական աշխատանքներ են ծավալվում նոր ծառայությունների, սպասարկման որակի բարելավման ուղղությամբ՝ հաշվի առնելով հաճախորդների հարցումների արդյունքները: